

ՀՏԴ 398

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՎԱԽՃԱՆԻ ԵՎ ՇԻԿԱՑԱԾ «ՊՍԱԿԻ»
ՇՈՒՐՁ

Պետրոսյան Ս. Գ., Մինասյան Ա. Լ.

Ըստ Փավստոս Բուզանդի՝ ուրացող և դավաճան Մերուժան Արծրունին սպանվել էր Մանվել Մամիկոնյանի (Մեծ Հայքի սպարապետ և կառավարիչ 378-384 թթ. միջև) հետ մենամարտի ժամանակ՝ սրա զինակիցների կողմից: Ըստ Մովսես Խորենացու՝ Ձիրավի ճակատամարտում (371թ.) պարտություն կրած և փախուստի դիմած պարսիկների հետ միասին Մերուժան Արծրունին ևս փորձել էր հեռանալ, բայց Կոզովիտ գավառում նրան հասել էր թագադիր ասպետ Սմբատ Բագրատունին: Վերջինս մահապատժի էր ենթարկել Մերուժանին մի յուրօրինակ ձևով. խորովածի երկաթե շամփուրը տաքացնելով մինչև շիկանալը, երկու պտույտ ոլորելով՝ որպես թագ դրել էր դավաճանի գլխին: Բուզանդը դեպքը նկարագրելիս հավանաբար օգտվել է Մամիկոնյանների տոհմական ավանդություններից, իսկ Մովսես Խորենացուն ավանդությունը հասել էր իր մեկենասի՝ մարզպանական Հայաստանի մարզպան-կառավարիչ Սահակ Բագրատունու միջոցով: Մեր կարծիքով՝ դիպվածի խորենացիական նկարագրության համար հիմք է ծառայել *շամփուր* բառի՝ գրաբարում երկու տարբեր իմաստներ ունենալու հանգամանքը՝ և՛ երկաթե շամփուր խորոված պատրաստելու համար, և՛ շամփուր – պսակ:

Բանալի բառեր. թագադիր, Շամբատ, ասպետ, պսակ, շամփուր, Մերուժան, Սմբատ, Բագրատ, Տմորիք, Անգեղտուն:

Նախաբան: Մեր պատմիչներից Փավստոս Բուզանդը և Մովսես Խորենացին բավականին մանրամասն նկարագրում են IV դարի հայ-պարսկական պատերազմների ժամանակ Հայաստանում ուրացող և դավաճան Մերուժան Արծրունու կատարած չարագործությունները: Այդուհանդերձ, Մերուժանի վախճանը նրանք տարբեր կերպ են

նկարագրում: Ըստ Փավստոս Բուզանդի՝ Մերուժան Արծրունին սպանվել էր Մանվել Մամիկոնյանի հետ մենամարտի ժամանակ՝ սրա զինակիցների կողմից, իսկ ըստ Մովսես Խորենացու՝ թագադիր ասպետ Սմբատ Բագրատունին ձերբակալել էր նրան և երկաթե շիկացած շամփուրով պսակ պատրաստել ու դրանով «թագադրել» դավաճանին:

Հոդվածի նպատակն է նախ՝ պարզաբանել, թե ինչքանով է Խորենացուն հասած այս տեղեկությունը համապատասխանում իրականությանը, հետո՝ գտնել երկու պատմիչների հաղորդումների տարբերությունների պատճառները, ինչպես նաև ստուգաբանությունների միջոցով հիմնավորել, որ Թագադիր ասպետությունը Բագրատունիներին՝ իրենց նախնիներից ժառանգված պաշտոն է եղել և, վերջապես, տեղորոշել Բագրատունիների նախնական ուստանի գտնվելու վայրը:

Այս հարցերը խիստ արդիական են Հայոց պատմության կնճռոտ խնդիրները լուսաբանելու համար, քանզի մինչև հիմա էլ մասնագետների մոտ առկա են թյուրըմբռնումներ վերոբերյալ իրադարձության շուրջ, ինչն էլ տարատեսակ կարծիքների տեղիք է տվել: Հոդվածում արծարծված հարցերին անդրադարձել են Հ. Աճառյանը, Գ. Սրվանձտյանը, Ս. Տ. Երեմյանը, Ն. Ադոնցը և այլք:

Մեր պատմիչներից Փավստոս Բուզանդը և Մովսես Խորենացին բավականին մանրամասն նկարագրում են IV դարի հայ-պարսկական պատերազմների ժամանակ Հայաստանում ուրացող և դավաճան Մերուժան Արծրունու կատարած չարագործությունները: Այդուհանդերձ, Մերուժանի վախճանը նրանք տարբեր կերպ են նկարագրում:

Ըստ Փավստոս Բուզանդի՝ Մերուժան Արծրունին սպանվել էր Մանվել Մամիկոնյանի հետ մենամարտի ժամանակ՝ սրա զինակիցների կողմից: Մանվելը Մեծ Հայքի սպարապետն էր և կառավարիչը 378-384թթ. միջև [6, էջ 108-109]: Բուզանդը դեպքը նկարագրելիս հավանաբար օգտվել է Մամիկոնյանների տոհմական ավանդություններից: Ըստ նրա՝ ճակատամարտի թոհուրոհում Մանվելը, ճանաչելով Մերուժանին, նրան մենամարտի է կանչում: Նիզակազեն ախոյանները «յորժամ հարկանէին նիզակօքն, քանզի երկոքեան արքն յաղթք էին, երկոքեան ի ձիոյն յերկիր անկանէին, եւ անդէն նիզակակիցն մանուելի Բաբիկ՝ տէր գավառին Միւնեաց, հասանէր, նիզակաւ ի վերուստ ի վայր ի կողին կարեր ընդ գետինն, եւ ոչ կարեր յառնել: Իսկ զսպարապետն Մանուել իւր վարաւանդասպաքն յերիվարն հանէին, եւ զՄերուժանայ զգլուխն ի բաց հատանէին» [17, գիրք Ե., գլ. Խզ]:

հաղորդման մեջ Մ. Աբեղյանը «Պարսից պատերազմը» ժողովրդական վեպի ազդեցությունն է տեսնում: Նա գրում է. «Վերջին անգամ պարսից թագավորը դավաճան Մերուժանի գլխավորությամբ գորք է ուղարկում հայերի վրա: Մերուժանն սպանվում է մարտի ժամանակ, նորա գունդն ամբողջ կոտորվում է... Եվ հայերի այս հաջողությամբ վերջանում է Պարսից պատերազմը»: [1, էջ 274-275]

Ըստ Մովսես Խորենացու՝ Ձիրավի ճակատամարտում (371թ.) պարտություն կրած և փախուստի դիմած պարսիկների հետ միասին Մերուժան Արծրունին ևս փորձել էր հեռանալ, բայց Կոզովիտ գավառում նրան հասած թագադիր ասպետ Սմբատ Բագրատունին ձերբակալել է նրան և որոշել՝ որպես ուրացողի և դավաճանի, առանց դատի, տեղն ու տեղը մահապատժի ենթարկել նրան: Ընդ որում՝ նա ընտրել էր մահապատժի իրականացնելու յուրօրինակ մի ձև. երկաթե շամփուրը տաքացնելով մինչև շիկանալը, երկու պտույտ ոլորելով՝ որպես թագ դնում է դավաճանի գլխին: Ավելի լավ է բացատրությունը որոնենք Խորենացու հետևյալ տողերում. «բոլորեալ որպէս *պսակ*, եւ յոյժ արտաշէկ արարեալ ասէ. «*Պսակէ՛մ* գքեզ, Մեհրուժան, քանզի ի խնդիր էիր թագավորել Հայոց. եւ ինձ ասպետիս պարտ է գքեզ *պսակել* ըստ սովորական իշխանութեան իմոյ հայրենեաց»: Եւ մինչ դեռ տաքն էր իբրեւ զհուր՝ եղ ի գլուխն Մեհրուժանայ, եւ այսպէս սատակեցաւ չարն»: [12, գիրք Գ, գլ. 1է]

Ինչքանով է Խորենացուն հասած այս տեղեկությունը համապատասխանում իրականությանը, դժվար է ասել, որովհետև, ինչպես տեսանք, Փավստոս Բուզանդը այլ կերպ և այլ ժամանակի մեջ էր ներկայացնում Մերուժան Արծրունու վախճանը: Կարծում ենք, որ այս պատմության հորինողը եղել է Բագրատունի տոհմի ներկայացուցիչ, իսկ Մովսես Խորենացուն ավանդությունը հասել էր իր մեկենասի՝ մարզպանական Հայաստանի մարզպան-կառավարիչ Սահակ Բագրատունու [12, գիրք Ա, գլ. ա] միջոցով: Եթե Մերուժան Արծրունու վախճանի խորենացիական վարկածի հեղինակին ոգեշնչել է ուրացողին և դավաճանին Բագրատունի թագադիր ասպետի միջոցով համազոր պատժի արժանացնելու փափագը, ապա, մեր կարծիքով, դրա համար հիմք է ծառայել *շամփուր* բառի՝ գրաբարում երկու տարբեր իմաստներ ունենալու հանգամանքը: Ըստ Սմբատի կողմից Մերուժանին մահապատժի ենթարկելու պատմության՝ խորոված անողների ներկայությունն է Սմբատ Բագրատունուն, հավանաբար, հուշել *շամփուր* բառի երկու նշանակությունները նկատի առնելով, չար խաղ

խաղալ Մերուժանի գլխին (բառիս բուն իմաստով) և նրան պսակել ոչ թե Պարսից թագավորի խոստացած Հայոց թագավորության շամփուր-պսակով, այլ հայ գեղջուկի շիկացրած շամփուր-ձողով՝ խորովածի երկաթե շշով:

Բնականաբար, Սմբատ Բագրատունուն հայտնի է եղել *շամփուր* բառի այդ հին իմաստը, որովհետև Մերուժանին «պսակելու» գործողությանը զուգընթաց նա ասել է. «Ըստ սովորական իշխանութեան իմոյ հայրենեաց»: *Շամփուր*-ի հին նշանակությունն է առկա նրա ածանցյալ *շամփրակ*-*շամփուր-ակ* բառում: *Շամփրակ* նշանակում է «պսակ հիւսեալ, թագ», [14, էջ 464:] իսկ *Շամփուր*-ը «պսակ» իմաստով առկա է *Հայկ(ն)* անվամբ հայտնի Օրիոն համաստեղության մյուս անվան մեջ՝ կոչված իր աստղերի պսակ հիշեցնող ուրվագծային դասավորության պատճառով. «Յունիս 14. Երեւի Հայկն որ է Շամփուրն»: [2, էջ 492] *Շամփրակ*-ի «թագ, պսակ» նշանակությունից է գալիս Գր. Մագիստրոսի գործածած *շամփրակագգեաց*՝ «պսակավոր» բառը: [2, էջ 493] *Շամփրակ*-ի *շամփրակ* տարբերակը նրա հետ միասին ուշ միջնադարյան «Բաղդիք հայոց»-ը բացատրում է որպես «պսակ կամ զարդ»: [5, էջ 247, 248] *Շամփուր* բառի երկրորդ նշանակությունն է «սայրասուր գաւազան երկաթի կամ փայտեայ, յոր անցուցանեն զԷրոս խորովելի մտոյ», «երկաթյա կամ փայտյա սուր ձողիկ, խորովածի շիշ»: [14, էջ 464; 2, էջ 492; Հմմտ. բրբ. *շաքաթայ* «երկայն և բարակ ձող» և *շապոյ* «ձող» 10, էջ 490, 500]

Շամփուր «թագ, պսակ» բառից և նրա իմաստից անբաժան են Հայոց թագադիր ասպետներից ավանդաբար առաջինը համարված անձի *Շամբատ*(ըստ Մովսէս Խորենացու) և *Փառագեան* (ըստ Անանուն պատմիչի) կոչումները: *Շամբաթ*-ը տարբեր է եբրայերեն «հանգիստ» նշանակող *շաքաթ* բառից և մաշված ձևն է նախնական **շամբապատ* բարդ բառի: [Տեղի ունեցել *-բա-* և *-պա-* նման հնչյունակապակցություններից երկրորդի օրինաչափ սղում] Հնչյունական անցման համար հմմտ. *Սսպատ*-ի առաջացումը **սսպապատ* նախաձևից և *Բիրատ*-ի առաջացումը **բիրապատ* նախաձևից (սրանից էլ *Բիրապատիկ* կոչված հեքիաթային կերպարի անունը) [16, էջ 186-188]: Ըստ այսմ, *Շամբատ*-ի **շամբապատ* նախաձևը նշանակելու էր «պսակ կապող, պսակակապ, թագակապ»: Հմմտ. հայերեն *պատ* արմատից ծագած պատել բայի «փաթաթել» և *պատիկ* բառի «փաթաթող» իմաստները [3, էջ 32-33]: Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Անանուն պատմիչը ավանդական

Վաղարշակի թագավորության առթիվ գործածում է *պսակել* բայը: «Մնա ընդ առաջ ելանէ Բագարատն Փառագեան յորդոցն Արամենակայ նախարար մեծ հանդերձ զարու: Մատուցանէ նմա պատարագ ոսկի եւ արծաթ. Եւ զարդարէ զնա ի սնդր եւ ի վակաս. *պսակել* զնա ի թագ հայրենի. Եւ նստուցանէ զնա ի վերայ ոսկիապատ ականակուր գահոյիցն»: [15, գլ. Բ, էջ 9; Բուն հայկական ծագմամբ մեր թագավորներին Մովսէս Խորենացին կոչում է «բնիկ պսակաւորք արք» 12, Ա, իբ] *Պսակել* նշանակում է «պսակաւ զարդարել. պսակ տալ կամ դնել. վարձատրել փառօք», [14, էջ 662] «մեկի գլուխը զարդարել ծաղկե պսակով», «մեկի գլխին պսակ՝ թագ դնել», [11, էջ 122] իսկ բայի *պսակ* արմատը նշանակում է «բոլորշի զարդ գլխոյ ի պէսպէս յորինուածոց՝ որպէս թագ արքունի...» [14, էջ 661]: *Շամբատ*-ի նման անձնանուն չէր լինելու նաև Բագարատի *Փարագեան* կոչումը, որը ևս նրան տրված անվանում էր լինելու՝ իմաստակիցը *թագակապ* բառի: Նրա հիմքում մենք տեսնում ենք սղված (մաշված) ձևը իրանական փոխառություն հանդիսացող *փարուագ* «ժապավեն» [3, էջ 490] բառի, որին հավելվել է *-եան* վերջածանցը (բառում անշեշտ *ու*-ի սղումը հայերենի համար օրինաչափ է, եթե միայն տեղի չի ունեցել *փարագնեայ* «ազնվական» [3, էջ 482] բառի ազդեցությամբ):

Ըստ երևոյթին, շամփուր-պսակի փոխարեն մահապարտի գլխին երկաթե շիկացած շամփուր-ձող դնելու Մերուծան Արծրունուն առնչված դեպքը միակը չի եղել: Ըստ Հովհան Մամիկոնյանի՝ իր գորքով Տարոն ներխուժած պարսից Տիգրան զորավարը Սմբատ Մամիկոնյանից պահանջում էր իրեն հանձնել պարսից թագավորի թշնամիների՝ հանգուցյալ Մուշեղ և Վահան Մամիկոնյանների ոսկորները: Դրանց դիմաց նա խոստանում էր «եղից *պսակ* ի գլուխ քո եւ արարից զքեզ մարգպան Հայոց»: Խոստումից չհրապուրվելով՝ Սմբատը «կալեալ զպատգամաւորսն՝ հրացոյց *շամփուր* մի երկաթի եւ եղ պսակ շուրջ զգլխով նորա և ասէ. «Կա՛ց տեսնեմ, թե վասն քո զի՞նչ պարգեւս գայցէ ինձ, որ ես քեզ պսակ եղի»: [13, էջ 253-254]

Այս դեպքում ևս *պսակ*-ը *շամփուր* չի կոչվում, բայց որ պսակի փոխարեն թշնամու գլխին շիկացած շամփուր (երկաթե ձողը) են հազցնում, պարզ է դարձնում բառախաղի առկայությունը՝ շամփուր-պսակի և շամփուր-ձողի միջև: Այս անգամ ևս մահապատիժ գործածողը *Սմբատ* է կոչվում, բայց նա Բագրատունի չէ, Մամիկոնյան է՝ Գայլ Վահանի որդին, պարսից Մուրեն և Տիգրան զորավարներին 7-րդ դարասկզբի կռիվներում հաղթողը [4, էջ 539]: Ի դեպ, սա մեր

պատմությանը հայտնի 149 Սմբատների շարքում այդ անունը կրած միակ Մամիկոնյանն է [4, էջ 538-563]: Ինչպես Մ. Աբեղյանն էր վաղուց նկատել, «Վահանի որդի Սմբատի անունը հիշեցնում է Սմբատ Բագրատունուն: Նրա (Սմբատ Մամիկոնյանի – Ս. Պ., Ա. Մ.) վրա էլ պատմված կա Սմբատ Բագրատունու Մեհրուժանին պսակելու նման մի բան... Այս Սմբատի անունը հին վեպի Սմբատի մի արձագանքն է լոկ, ինչպես և Մուշեղը հին վեպի Մուշեղն է» [1, էջ 307]: Մ. Աբեղյանը «Մասնա ծոեր»-ի ձևավորմանը նախորդած ժողովրդական դյուցազնավեպերի մեջ առանձնացնում է հին վեպը՝ «Պարսից պատերազմը», և նոր վեպը՝ «Տարոնի պատերազմը» [1, էջ 181-302 և 303-324]:

Քանի որ թագակապ ասպետի գործակալությունը դարեր շարունակ եղել է Բագրատունի տոհմի մենաշնորհը, ըստ այդմ՝ նրա միջոցով կարելի է լուծել նաև Բագրատունիների նախնական ոստանի տեղադրության հարցը: Տրդատ 1-ինի օրոք, ինչպես Մ. Երեմյանն է գրում. «Բագրատունիների հայրենի կալվածքը գտնվում էր Տմորիք կամ Կորդրիք գավառում՝ կենտրոն ունենալով Ալկի ամրոցը: Բագրատունիների նախնական տերիտորիան Պտղոմեոսի (90-168թթ.) «Աշխարհագրության» մեջ հայտնի է Σαμβάθαι 'έθνος (անունով – Ս. Պ., Ա. Մ.) և համապատասխանում է հայ մատենագիրների «Մարաց աշխարհին» [7, էջ 747]: Բագրատունյաց ոստանի այսպիսի տեղադրությունը հաստատվում է Մովսես Խորենացու մի հաղորդման միջոցով, թեպետև նա դա վերագրում է Արտաշեսի (ըստ երևույթին, Արտաշես 1-ինի՝ մ.թ.ա. 189-160 թթ.) ժամանակաշրջանին: Նա գրում է. «Սմբատ Բագրատունին գնաց գկողմամբք Ասորեստանի, իւրովք կամօք թողլով զիշխանութիւն զօրացն Հայոց, ընդ որ խանդայրն Արտաւագո: Հրամանաւ Արտաշիսի բնակէ ի Տմորիս, որ այժմ կոչի Կորդրիք, ի յԱլկի նստուցեալ զբազմութիւն գերւոյն. Քանզի էր ի ծերութեան կին արարեալ յասորեստանեայց հուպ յայն կողմանս, զոր յոյժ սիրեաց, վասն այնորիկ եւ զնորին կողմամբք բնակեցաւ» [12, գիրք Բ, գլ. ծգ]: Բիարկե, Սմբատի Տմորիք-Կորդրիքում հաստատվելը թագավորի հրամանով կամ իր ասորեստանցի կնոջը շատ սիրելու պատճառով չի եղել: Դրանք հետնագույն բացատրություններ են: Պատճառը լինելու էր այն, որ թողնելով Հայոց բանակի հրամանատարի պաշտոնը՝ նա բավարարվել էր թագակապ ասպետի պաշտոնով, որին կցված ժառանգական տիրույթը Պտղոմեոսի երկում *Մամբայթայ էթնոս* («ազգն Շամբատայ») [8]

կոչված շրջանն էր՝ Տնորիք-Կորդիքով: Իսկ *Շամբատ* բառը, ինչպես տեսանք, հենց «թագակապ» է նշանակում:

Հիմք ընդունելով Անանուն պատմիչի մի հաղորդումը Անգեղտան իշխանների՝ Արամանյակից սերած լինելու վերաբերյալ՝ այն վերագրել են Բագրատունիներին և նրանց ժառանգական տիրույթն համարել Մեծ Հայքի Անգեղտուն գավառը [18, էջ 413] («Աշխարհացոյց»-ում այն համարվում է Աղձնիք աշխարհի գավառներից մեկը) [9, էջ 35, 107]: Անանուն պատմիչի հաղորդածի համաձայն՝ ժամանակին հայերին «Ասորեստանեայց թագաւորքն տիրեցին մինչեւ զմեռանելն Մենեքերիմայ, ապա ապստամբեցին յԱսորոց թագաւորացն ծառայութենէ: Եւ տիրէ ի վերայ նոցա Զարեհ որդի որդոց Արամենակայ... ապա Փառնաւագ: Սա ծնավ զԲագամ եւ զԲագարատ. Եւ Բագարատ ծնաւ զԲիրատ, եւ Բիրատ ծնաւ զԱսպատ: Եւ որդիքն բագարատայ ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց ի կողմանս արեւմտից, այս ինքն է Անգեղ տուն, վասն զի կոչեցաւ Բագարատ եւ Անգեղ, զոր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբարոսացն աստուած կոչեցին»: [15, գլ. Ա, էջ 7; Բուն հայկական ծագմամբ մեր թագավորներին Մովսես Խորենացին կոչում է «բնիկ պսակաւորք արք» [12, Ա, իբ]: Ինչպես տեսնում ենք, Անանուն պատմիչը խոսում է ոչ թե Բագրատունիների, այլ Անգեղտան իշխանների ժառանգական տիրույթի, «այսինքն՝ Անգեղտան» մասին: Իսկ որ Բագրատունիների ժառանգական տիրույթը եղել է Ալկին՝ իր շրջակա հողերով, վկայում է նաև նույն տարածքից հայտնի *Սմբատաբերդ* տեղանունը [Հմմտ. *Սմբատավանի* անունը Բագրատունիների «ձեռական իշխանության երկիր» Սպերում, 9, էջ 44]: Նախապես Բագրատունի տոհմին բնորոշ և բազմիցս կրկնված *Սմբատ* անունը բացակայում է Անգեղտան իշխանների անվանացանկում:

Եզրահանգում: Այսպիսով, Մերուժան Արծրունու վախճանի մասին մեր պատմիչների ավանդած պատմությունները, կրելով «Պարսից պատերազմը» ժողովրդական վեպի ազդեցությունը, անհայտ է թողնում նրա մահվան բուն հանգամանքները: Մեր կարծիքով՝ խորենացիական վարկածի համար հիմք է ծառայել *շամփուր* բառի՝ գրաբարում երկու տարբեր իմաստներ ունենալու հանգամանքը: Խորոված անողների ներկայությունն է Սմբատ Բագրատունուն, հավանաբար, հուշել *շամփուր* բառի երկու նշանակությունները նկատի առնելով՝ չար խաղ խաղալ Մերուժանի գլխին (բառիս բուն իմաստով) և նրան պսակել ոչ թե Պարսից թագավորի խոստացած Հայոց թագավորության շամփուր-պսակով, այլ հայ գեղջուկի շիկացրած շամփուր-ձողով՝ խորովածի

երկաթե շշով: Բնականաբար, Սմբատ Բագրատունուն հայտնի է եղել *շամփուր* բառի այդ հին իմաստը, որովհետև Մերուժանին «պսակելու» գործողությանը զուգընթաց նա ասել է. «Ըստ սովորական իշխանութեան իմոյ հայրենեաց»: Պարզվում է, որ ավանդաբար Հայոց առաջին թագադիր ասպետը համարված անձի *Բագարատ* անվանը կից գործածված *Շամբատ* և *Փառազեան* մակդիրները նրա պաշտոնը նշող *թագադիր, թագակապ* բառերի հին համարժեքներն են, որոնց կրողների ժառանգական տիրույթը եղել է Տմորիք-Շորդրիքը:

О СМЕРТИ МЕРУЖАНА АРЦРУНИ И О НАКАЛЕННОМ «ВЕНЦЕ-ВЕРТЕЛЕ»

Петросян С. Г., Минасян А. Л.

По словам Павстоса Бузанда, отступник и предатель Меружан Арцруни был убит на дуэли с Манвелом Мамиконяном (марзпан-правитель Великой Армении между 378-384 г.г.). По словам Мовсеса Хоренаци, наряду с персами, которые потерпели поражение в битве при Дзираве (371) и сбежали в Персию, Меружан Арцруни также пытался уйти, но в провинции Коговит его догнал князь Смбат Багратуни. Последний казнил Меружана уникальным образом: нагрел железный вертел, он два раза скрутил его и как венец поместил на голову предателя.

При описании инцидента Бузанд, вероятно, использовал семейное предание князей Мамиконян, а к Мовсесу Хоренаци предание дошло благодаря его меценату Сааку Багратуни - правителю Армении. По нашему мнению, основой инцидента послужило то обстоятельство, что в древнеармянском наличествовали два разные значения слова *шампур* – «вертел» и «енец».

Ключевые слова: тагадир, аспет, вертел, венец, Шамбат, Меружан, Смбат, Багарат, Тморик, Ангехтун.

ABOUT THE DEATH OF MERUZHAN ARTSRUNI AND THE HEATED "CROWN-SPIT"

Petrosyan S. G., Minasyan A. L.

According to Pavstos Buzand, the apostate and traitor Meruzhan Artsruni was killed in a duel with Manvel Mamikonyan (marzpan-ruler of Great Armenia between 378-384).

According to Movses Khorenatsi, along with the Persians, who were defeated in the battle of Dzirav (371) and fled to Persia, Meruzhan Artsruni also tried to escape, but in the province of Kogovit he was succeeded by the prince Smbat Bagratuni. The latter executed Meruzhan in a unique way: heating up the iron spit, twisted it twice and as a crown placed on the head of the traitor. When describing the incident Buzand probably used family legend of Mamikonyan, and the legend was reached to Movses Khorenatsi by his patron Sahak Bagratuni - the ruler of Armenia. In our opinion, for this incident served as a basis the fact, that in ancient armenian there were two different meanings of the word *shampur* – “spit” and “crown”.

Keywords: tagadir, aspet, spit, crown, Shambat, Meruzhan, Smbat, Bagarat, Tmorik, Angeghtun.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Ս. Երկեր: Հ. I: Եր.: ՀՍՍՀԳԱ հրատ: 1966: 572 էջ:
2. Աճառյան Հ. Հայերեն արմատական բառարան: Հ. III: Երևան: Երևանի համալսարանի հրատ.: 1977: 636 էջ:
3. Աճառյան Հ. Հայերեն արմատական բառարան: Հ. IV: Երևան: Երևանի համալսարանի հրատ.: 1979: 675 էջ:
4. Աճառյան Հ. Հայոց անձնանունների բառարան: Հ. IV: Երևան: Պետական համալսարանի հրատ.: 1948: 683 էջ:
5. Բաղդիրժ Հայոց: Քննական բնագիրը: առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հ. Ամալյանի: Երևան: ՀՍՍՀԳԱ հրատ.: 1975: 445 էջ:
6. Երեմյան Ս.Տ. Հայաստանը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում: //Հայ ժողովրդի պատմություն: 1984: Հ. II: էջ 108-109:
7. Երեմյան Ս. Տ. Հայաստանը հռոմեա-պարթևական հակամարտության ոլորտում//Հայ ժողովրդի պատմություն: 1971: Հ. I: էջ 106-161:
8. Երեմյան Ս. Տ. «Հայաստանը մ.թ.ա. 66 – մ. թ. 224 թվականներին» քարտեզը: «Հայ ժողովրդի պատմություն»: Երևան: ՀՍՍՀԳԱ հրատ.: Հ. I: 1971: 992 էջ:
9. Երեմյան Ս. Տ.: Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա): Երևան: ՀՍՍՌԳԱ հրատ.: 1963: 156 էջ:

10. Մալխասյանց Ստ. Հայերեն բացատրական բառարան: Երևան: ՀՄՍՌ Պետական հրատ.: Հ. III: 1944: 614 էջ:
11. Մալխասյանց Ստ. Հայերեն բացատրական բառարան: Երևան: ՀՄՍՌ Պետ. հրատ.: Հ. IV: 1945: 648 էջ:
12. Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց: Երևան: Երևանի համալսարանի հրատ.: 1981: 592 էջ:
13. Յովհան Մամիկոնեան Պատմութիւն Տարօնոյ: Երևան: ՀՄՍՌ ժողկոմսովետին կից պետ. ձեռագրատուն (մատենադարան): 1941: 300 էջ:
14. Նոր բառգիրք հայկազեան լեզուի. Երկասիրութիւն Հ. Գաբրիէլի Աւետիքեան: Հ. Խաչատրոյ Սիրմէլեան: Հ. Մկրտչի Աւգերեան: Երևան: Երևանի համալսարանի հրատ.: Հ. II: 1981: 1070 էջ:
15. Սերէնսի եպիսկոպոսի Պատմութիւն: Երևան: Արմֆան: 1939: 217 էջ:
16. Սրվանձտյանց Գ. Երկեր: Երևան: ՀՍՍՀԳԱ հրատ.: Հ. I: 1978: 668 էջ:
17. Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց: Երևան: Երևանի համալսարանի հրատ.: 1987: 456 էջ:
18. Адонц Н. Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарского строя. Ереван. Изд. Ереванского университета. 1971. 527 с.

Տեղեկություններ հեղինակների մասին

Պետրոսյան Մ. Գ. - պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
 ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
 Էլ. փոստ՝ vahe1996@mail.ru

Մինասյան Ա. Լ. - ուսուցիչ
 Գյումրու «Ֆոտոն» վարժարան
 Էլ. փոստ՝ ashmin1977@mail.ru

Տրվել է խմբագրություն 15.10.2019